



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ
ԳԼԽԱՒՈՐ ՀԻՄՊԱՏՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՈՒՍԱՍ ՏԻԱՊԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 30 Յուլիսի յետմիջօրէին Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց Լոս Անճելըսի մօտ Լիբանանի գլխաւոր հիւպատոսի տեղակալ Տիար Հուսամ Տիապը, որ վերջերս նշանակուած է այս պաշտօնին: Հանդիպումին ներկայ եղան Հոգ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիկեան եւ Ազգ. Վարչութեան անդամներ Տեարք Կարօ Էշկիեան եւ Խաչիկ Երեցեան:

Սկստի ունենալով, որ յարգելի հիւրը առաջին անգամ ըլլալով էր որ կ'այցելէր Ազգ. Առաջնորդարան, Առաջնորդ Սրբազանը ընդհանուր տեղեկութիւններ տուաւ աշխատանքի մարզերուն մասին, ընդգծելով, որ Ազգ. Առաջնորդարանին ու Լիբանանի հիւպատոսարանին միջեւ կան տասնամեակներու վրայ տարածուող բարեկամական սերտ կապեր, մանաւանդ, որ Լիբանանը կը նկատուի սփիւռքի հայութեան մէկ գլխաւոր օճախը եւ Ցեղասպանութենէն ետք հիւրընկալած է Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռը՝ Անթիլիասի մէջ:

Լիբանանցի դիւանագետը գոհունակութիւն արտայայտեց հիւրընկալումին համար: Ան դրուատիքով արտայայտուեցաւ ընդհանրապէս հայութեան ու մասնաւորաբար Լիբանանի հայ համայնքին մասին, նշելով, որ անկա կարելոր ներդրում ունեցած է Լիբանանի տնտեսական, մշակութային ու քաղաքական կեանքերուն մէջ, շահելով հաւատարիմ քաղաքացիի կոչում: Ան յոյս յայտնեց, որ հիւպատոսարանին ու Ազգ. Առաջնորդարանին միջեւ գործակցութիւնը շարունակուի եւ նոր հանգրուաններ նուաճէ:

Հրաժեշտ առնելէ առաջ, հիւր դիւանագետը վստահութիւն յայտնեց, որ հիւպատոսարանին ու Ազգ. Առաջնորդարանին միջեւ կապերը պիտի մնան սերտ ու յաճախակի:

**PRELATE WELCOMES NEW ACTING CONSUL GENERAL OF
LEBANON THE HONORABLE HOUSSAM DIAB**

On the afternoon of Wednesday, July 30th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the new Acting Consul General

of Lebanon the Honorable Houssam Diab. Participating in the meeting were Very Rev. Fr. Barthev Gulumian and Executive Council members Mr. Garo Eshgian and Mr. Khatchig Yeretjian.

Given that it was the Acting Consul's first visit to the Prelacy, the Prelate familiarized him with the endeavors and mission of the Prelacy. He emphasized the decades-long friendship between the Prelacy and the Lebanese Consulate, highlighting the fact that Lebanon has one of the largest Armenian communities in the Diaspora and that the Catholicosate of Cilicia was welcomed in Lebanon in the aftermath of the Genocide.

The Acting Consul spoke highly of the Armenian people as a whole and specifically of the community in Lebanon who have contributed positively to the economy, culture, and society in general, and asserted that the collaboration between the Consulate General and the Prelacy will continue for years to come.